ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020թվականի N 64-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 44-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 4-ՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ <<ԵՐԱՆՈՍԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ>>ՀՈԱԿ-Ի ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի պահանջներով՝

Երանոս համայնքի ավագանին որոշում է.
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Երանոս համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 44-Ա որոշման հավելված 4-ով հաստատված <<Երանոսի կոմունալ տնտեսություն և բարեկարգում>> ՀՈԱԿ-ի կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումը.

1. 2.6.Կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել միայն հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով բաժինը ավելացնել նոր ենթակետով. 9/Համայնքային ենթակայության,ոչ տարանցիկ,տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների, ներհամայնքային փողոցների երթևեկելի մասի և մայթերի սալապատման, խճապատման,դրանց ընթացիկ նորոգման ու բարեկարգման աշխատանքների կատարում:

2. Առաջարկել Երանոս համայնքի ղեկավարին կատարել սույն որոշումից բխող համապատասխան փաստաթղթային ձևակերպումները;

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱՎԵՅԱՆ ԳԱԳԻԿ

ԲԱՐԲԱՌՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՀԱՐԻԿՅԱՆ ՋԱՆԻԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԽԱԺԱԿ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՄԱՆ

ՔՅԱՐԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՇԱ ԲԱՎԵՅԱՆ